

ԻՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ

Bookmark

САТИ СПИВАКОВА

НЕСКУЧНАЯ КЛАССИКА

Еще не всё

Bookmark

ՍԱԹԻ ՄՊԻՎԱԿՈՎԱ

ԻՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ

*Անձանձրոյթ զրոյցներ արվեստի
մարդկանց հետ*

Թարգմանությունը ռուսերենից՝
Անուշ Մուրադյանի



ԵՐԵՎԱՆ
2022

ՀՏԴ 7

ԳՄԴ 85

Ս 830

Սպիվակովա Սաթի
U 830 Իրական դասական: Անձանձրույթ զրույցներ արվեստի մարդկանց հետ / Ս. Սպիվակովա; Թարգմանությունը ռուսերենից՝ Ա. Մուրադյանի.- Եր.: Newmag, 2022.- 572 էջ:

Երաժշտության աշխարհի իր բացահայտումները Սաթի Սպիվակովան զետեղել է մեկ ժողովածուի մեջ: Տասը տարի հեռուստատեսությամբ հեռարձակվող մշակութային հաղորդաշարի 300-ից ավելի հարցազրույցներից նա իր գրքում ընդգրկել է մի քանի տասնյակը, նրանք, որոնցում հերոսի անհատականությունն ի հայտ է գալիս երաժշտության միջոցով: Գրքում ամբողջացված են ռուսական և արտասահմանյան նշանավոր արվեստագետների հուշերն ու գեղագիտական պատկերացումները: Սաթի Սպիվակովան արվեստին, գիտությանը և փիլիսոփայությանն առնչվող զրույցների միջոցով ի հայտ է բերում իր զրուցակիցների երաժշտական աշխարհընկալումը:

Յուրաքանչյուր հարցազրույցի համար Սաթի Սպիվակովան նախաբան է գրել, իսկ որպես վերջաբան կցել է իր զրուցակցի համար կարևոր երաժշտական ստեղծագործությունները, որոնք օգնում են ընթերցողին լիարժեք ընկալել մեր ժամանակների մեծագույն մտածող անհատների հոգեկերտվածքը:

Մայա Պլիսեցկայա, Ռոդիոն Ծչեդրին, Տատյանա Չեռնիգովսկայա, Ֆանի Արդան, Վալենտին Գաֆտ, Սերգեյ Յուրսկի, Անդրեյ Կոնչալովսկի, Շառլ Ազնավուր... Բոլոր հյուրերը Սաթի Սպիվակովային հարազատ են ու մտերիմ, զրույցներն էլ ոչ թե հաղորդավարի և հյուրի միջև են, այլ վաղեմի ընկերների:

ՀՏԴ 7
ԳՄԴ 85

**Նախագծի գլխավոր գործընկեր՝
Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի
հայկական ընկերության (ԱՕԿՍ) Ռուսական գրքի կենտրոն:**

ISBN 978-9939-884-57-8

© Спивакова С. З.

© ВГТРК; Телепрограмма “Камертон. Программа Сати Спиваковой” (Спивакова С. З., Лайон С., Соколов А., Вершинин Д.), Телепрограмма “Сати. Нескучная классика” (Спивакова С. З., Вершинин Д.)

Սաթի Սպիվակովա «Իրական դասական» © 2022, Նյու Մեք ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակման բոլոր իրավունքները պատկանում են «Օրակույ» և «Նյումեգ» ընկերություններին: Համաձայն կնքված պայմանագրի՝ «Օրակույ» հրատարակչության գրքերը ներկայացված են որպես «Նյու Մեգ» ընկերության «Օրակույ» հայ-ռուսական մատենաշար: Գրքի հայերեն թարգմանության և հրատարակման իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻՑ

9

ՄԱՅԱ ՊԼԻՍԵՑԿԱՅԱ Առաջին հյուրը	11
ՌՈՒԴԻՈՆ ՇՁԵԴՐԻՆ Շչեդրինկա արահետը	23
ՄԻԽԱՅԻԼ ՇԵՄՅԱԿԻՆ «Իսկ ընկերս՝ բոլոր ժամանակների հանճարը, խենթն ու թեթևաուլիկը»	37
ՏԱՏՅԱՆԱ ՉԵՌՆԻԳՈՎՍԿԱՅԱ Չեռնիգովսկայայի էֆեկտը	55
ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ Սիրո ասպիրին	75
ԱԼԼԱ ԴԵՄԻԴՈՎԱ Հնայվաճ ձայնը	83
ԹԵՈՒՐ ԿՈՒՐԵՆՏՋԻՍ Երազանքի ռազմիկը	93
ՖԱՆԻ ԱՐԴԱՆ Մի՛ փախիր անձրևից	109
ԳԻԱ ԿԱՆՉԵԼԻ «Ես ապրել եմ ուզում, որպեսզի մտածեմ ու տառապեմ...»	121
ԻՐԻՆԱ ԱՆՏՈՆՈՎԱ Միայն առաջին շերտը	143
ԳԻԴՈՆ ԿՐԵՄԵՐ Միրաժիստը	155
ԽԻԲԼԱ ԳԵՐՋՄԱՎԱ Ոսկե աչքերով աղջիկը	183
ԴՄԻՏՐԻ ՉԵՌՆՅԱԿՈՎ Տաղանդի տարերքը	193
ՎԱԼԵՐԻ ԳԵՐԳԻԵՎ Մենացեախ	209
ՋԵՍԻ ՆՈՐՄԱՆ Ջեսիի մետաֆիզիկան	223
ՎԼԱԴԻՄԻՐ ՅՈՒՐՈՎՍԿԻ Երկու զրույց վարպետի հետ	243
ԵՎԳԵՆԻ ԿԻՍԻՆ «Երաժշտությունը չի կարելի բացատրել բառերով...»	285

ԼՅՈՒԴՄԻԼԱ ՄԱԿՍԱԿՈՎԱ Կրկնակի դիմանկար	297
ՌՈՒԲԵՐՏ ՈՒԻԼՍՈՆ Վիզուալիստը	309
ԽՈՍԵ ԿԱՐԵՐԱՍ Դոն Խոսե	323
ՆԻԿՈԼԱՅ ԼՈՒԳԱՆՍԿԻ Դաշնամուրի իշխանը	331
ԲՐՈՒՆՈ ՄՈՆՍԵՆժՈՆ Երաժշտության տարեգիրը	357
ԶՈՅԱ ԲՈԳՈՒՍԼԱՎՍԿԱՅԱ Ժամանակակիցը	365
ՎԱԼԵՆՏԻՆ ԳԱՖՏ «Այստեղ ծշմարտությունն է մերկացած...»	375
ՍԵՐԳԵՅ ՖԻԼԻՆ Սերգեյ Ֆիլինի մի քանի կյանքը	391
ԵԼԵՆԱ ՕԲՐԱԶՅՈՎԱ Զքնաղ Հեղինեն	413
ԴՄԻՏՐԻ ԽՎՈՐՈՍՏՈՎՍԿԻ Ընորհակալ եմ քեզ	427
ԳՐԻԳՈՐԻ ՍՈԿՈԼՈՎ «Ստեղնով ձեռքիցս կերակրում էի երամը»	437
ԲՈՐԻՍ ԷՅՖՄԱՆ Երկու մարդ, որոնցից յուրաքանչյուրը ես եմ	451
ԱՆԴՐԵՅ ԿՈՆՉԱԼՈՎՍԿԻ Կոնչալովսկու ձեռագիրը	463
ԴԻՆԱ ՌՈՒԲԻՆԱ Իսկ այստեղ մի քիչ presto	473
ՍԵՐԳԵՅ ՅՈՒՐՍԿԻ Ժամանակի բեկումը	485
ՅՈՒՐԻ ԳՐԻԳՈՐՈՎԻՉ Պատանեկությունը տարիք չունի	497
ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՍԻԼԵՎ Անբաժանները	517
ՅՈՒՐԻ ՌՈՍՏ Թաքնված պատկեր	527
ՍՈԼՈՄՈՆ ՎՈԼԿՈՎ Ժամանակների կապը	545
ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ «Քանի վառվում է մոմը...»	567
ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ	569

Վլադիմիր Սպիվակովին

Bookmark 

ՀԵՂԻՆԱԿԻՑ

2002 թվականին ես հուշերի գիրք գրեցի, որը կանխամտածված անվանեցի «Ոչ ամենը»... Անցած գրեթե 20 տարում բազմիցս ինձ հարցրել են՝ շարունակություն լինելո՞ւ է: Պատասխանում էի՝ դեռ ոչ: Ժամանակ չկա: Ցանկություն չունեմ: Հիմա էլ նույնը կասեմ: Գիրքը, որ ձեր ձեռքին է, շարունակությունը չէ: Գուցե կգա պահը, երբ ներքին ձայնս կօրհնի ինձ գրել «Ամենը»: Բայց հիմա ավարտված է ուրիշ, ինձ համար շատ կարևոր աշխատանք՝ «Սաթի: Ոչ ձանձրալի դասականը» շարքի զրույցների հավաքածուն, որի յուրաքանչյուր գլուխ սկսվում է իմ ներածականով: Համավարակն օգնության եկավ՝ թանկարժեք ժամանակ նվիրելով, որպեսզի ընտրեի հատկապես այն զրույցները, որոնցում, ըստ իս, երաժշտության մասին խոսակցության միջոցով ընթերցողի առաջ բազմաթիվ մանրամասներով ներկայանում է հերոսներից յուրաքանչյուրի անհատականությունը: Այս հարցազրույցների շարքը լրացրել եմ նաև մի քանի զրույցներով իմ հեղինակային մեկ այլ՝ «Կամերտոն» ծրագրից, որ եթեր է հեռարձակվել «Կուլտուրա» ալիքով 2005-10 թվականներին: Այդ շարքում հազվագյուտ հարցազրույցներ են եղել, որոնց հերոսների հետ այս կամ այն պատճառով չեմ կարողացել հանդիպել «Ոչ ձանձրալի դասականի» գոյության 10 տարիների ընթացքում: Այս գրքի մեկ այլ, իմ կարծիքով, յուրօրինակ գաղափարն այն է, որ յուրաքանչյուր գլխի վերջում բերված է ծրագրերում հիշատակված կամ հնչած երաժշտական ստեղծագործությունների ցանկը: Այդպիսով, ցանկության դեպքում ընթերցողը կարող է հեշտությամբ գտնել

դրանք ու լսել՝ ամբողջացնելով հերոսի դիմանկարը նրա երաժշտական նախասիրություններով: Եվ բոլոր զրույցները, թանկարժեք մարգարիտների նման շարվելով մեկ թելի վրա, ստեղծել են մանյակ: Մնում է փականը, այսինքն՝ նախաբանը: Պարզվեց՝ ամենաբարդը հենց դա գրելն էր:

«Կուլտուրա» հեռուստաալիքը գործում է 22 տարի, և արդեն ճիշտ 15 տարի ես աշխատում եմ այնտեղ: Ավելի ճիշտ, այնքան էլ այդպես չէ: Ես երբեք ալիքի հաստիքային ցուցակում չեմ եղել, թեև հաճախ ինձ նրա դեմքն են համարել: Իմ բոլոր ծրագրերը թողարկել և թողարկում է M-production փայլուն պրոդյուսերական ընկերությունը: «Ոչ ձանձրալի դասականը» ծրագիրը 2020 թվականի ապրիլի 20-ին դարձավ 10 տարեկան: Հեռուստատեսության համար սա պատկառելի տարիք է: Կարծում եմ՝ ալիքի ղեկավարությունից որևէ մեկը շնորհավորե՞ց մեզ, որևէ մեկը հիշե՞ց 311 հաղորդումների մասին: Ավա՛ղ... «Սաթի: Ոչ ձանձրալի դասականը» գոյություն ունի ոչ թե շնորհիվ, այլ ի հեճուկս բոլոր գործոնների՝ դեկորացիաների վթարային վիճակի, հեռուստահաղորդումների ցանցում ժամանակային մշտական տեղաշարժերի, ծանուցումների լիակատար բացակայության, նախագծի արդիականացման ու կատարելագործման համար անհրաժեշտ լրացուցիչ միջոցների ներգրավման անհնարինության... Այն, որ մենք մինչև օրս եթեր ենք դուրս գալիս, իմ հավատարիմ պրոդյուսեր, հիասքանչ Մարգո Կրժիժևսկայայի արժանիքն է, նաև նկարահանման իմ ամբողջ խմբի, որն անփոփոխ է մնացել այս տարիների ընթացքում: Եվ, իհարկե, գլխավորը, որ մեզ քաջալերում է, հանդիսատեսի չնվազող հետաքրքրությունն է ոչ միայն ամբողջ Ռուսաստանում, այլև նրա սահմաններից դուրս...

Այս տողերը գրում եմ 2020 թվականի ամռանը, իմ կյանքի, և ոչ միայն իմ, ամենատարօրինակ տարում: Մեր աշխարհը սեղմվել է բնակտարածքի չափ: Մեր զգացմունքները, ընդհակառակը, գերաճել են մինչև անքնության ամենախորքը: Ինչպես էլ հետագայում դասավորվի հեռուստատեսությունում իմ մասնագիտական կյանքը, հավատում եմ ու գիտեմ, որ հսկայական թվով հեռուստադիտողների համար «Սաթի: Ոչ ձանձրալի դասականը» դարձել է երաժշտության հանդեպ սիրո կամերտոն: Իսկ դա նշանակում է, որ 300-ից ավելի հաղորդումների տևողությամբ ճանապարհորդությունն իզուր չի եղել...



Մայա Պլիսեցկայա

1925-2015

~

Առաջին հյուրը

Բալետի ռուս պարուհի և խորեոգրաֆ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ: Առաջին գլխավոր դերապարը կատարել է 1944-ին: Դերերը՝ «Մեռնող կարապը», Օդետա-Օդիլիա, Պղնձե լեռան տիրուհին, Ռայմոնդա, Կիտրի, Կարմեն: 1958-ին ամուսնացել է ռուս կոմպոզիտոր Ռոդիոն Շչեդրինի հետ: Պլիսեցկայայի պարն առանձնանում էր բարձրարվեստ պլաստիկայով: Նա նորովի է մեկնաբանել Չայկովսկու, Գլազունովի, Բիզեի երաժշտությունը: Պլիսեցկայան խորհրդային բալետի ամենահայտնի պարուհին էր: 1957-ին հյուրախաղերով եղել է Երևանում:

Մայա Միխայլովնա Պլիսեցկայա: Այն մարդկանցից մեկը, որի հետ հանդիպումն ու շփումը կարելի է ճակատագրի նվեր համարել: Թանկագին նվեր: Ես երջանկություն և առանձնաշնորհ եմ ունեցել կենդանի առասպելի հետ շփվել երկար ժամանակ երես առ երես: Երբ, սկսելով «Ոչ ձանձրալի դասականը» շարքը, հրավիրեցի նրան դառնալ իմ առաջին հյուրը, անմիջապես համաձայնեց՝ կատարելով ավելացնելով. «Իհարկե, Սաթենկա՛, կգամ: Հասկանում եմ, որ եթե ինձնից սկսես, ծրագիրդ հաջողություն կունենա: Դա կարևոր է»: Լսողական հիշողությունս ընդմիջար պահպանել է նրա ձայնի անկրկնելի տեմբրը և այն, թե ինչպես էր նա արտաբերում իմ անունը՝ երկարեցնելով «ա» ձայնավորը՝ Սա-աթենկա: Նա կարծես կանխատեսում էր: Մայա Պլիսեցկայան դարձավ մեր հաղորդման բարի փերին, պահպան հրեշտակը: Նրա հետ զրույցի վերջաբանի փոխարեն ուզում եմ ներկայացնել Tatler ամսագրում տպագրված իմ հոդվածը, որ գրել եմ նրա մահվան օրը...

20 ապրիլի, 2010

«ՍԱԹԻ. Ոչ ձանձրալի դասականը» հաղորդման առաջին թողարկումը*

ՍԱԹԻ ՍՊԻՎԱԿՈՎԱ Բարև ձեզ, եթերում «Ոչ ձանձրալի դասականը»

հաղորդումն է և նրա վարող Սաթի Սպիվակովան: Մեր հաղորդումը կօգնի ձեզ հասկանալ և սիրել դասական երաժշտությունը: Որքա՞ն հաճախ եք հրաժարվում գնալ դասական երաժշտության համերգի միայն այն պատճառով, որ վախենում եք չհասկանալ այնտեղ ձեր լսածը: Դասական երաժշտությունը պարզապես ապրում է իր օրենքներով: Մեր հաղորդումը երաժշտական որոշ գաղտնիքներ կբացահայտի, և կհամոզվեք, որ դասականը ձանձրալի չի լինում**:

Մեր երկիրը հարուստ է մեծ արտիստներով: Նրանց թվում կան համահունչորակային չափումների մարդիկ: Բայց անգամ նրանց մեջ վառ

* Այստեղ և այսուհետև խոսքը վերաբերում է «Սաթի: Ոչ ձանձրալի դասականը» հաղորդմանը, եթե այլ բան նշված չէ: (Ծանոթագրությունները՝ հեղինակի):

** Այսպես էր հնչում «Սաթի: Ոչ ձանձրալի դասականը» ծրագրի առաջին թողարկման ազդագիրը: Հետագայում այն կրճատվեց, առաջ եկավ երկու տարբերակ՝ ծրագրի թեմայով պայմանավորված: Իսկ այդ նախնական ազդագրից ստեղծվեց իմ ֆիրմային կարգախոսը՝ «Դասականը ձանձրալի չի լինում»: (Այժմ նկատում եմ, թե ինչպես են նույն «կարգախոսով» այսուայնտեղ ի հայտ գալիս ուրիշների համերգային ծրագրերն ու դասախոսությունները):

աստղի պես փայլատակում է Մայա Պլիսեցկայան: Եվ այսօր Մայա Միխայլովնան մեր հյուրն է: Բարև Ձեզ, Մայա Միխայլովնա:

ՄԱՅԱ ՊԼԻՍԵՑԿԱՅԱ Բարև Ձեզ, Սաթի՛:

(Ի պատասխան հնչած ծափահարություններին, Պլիսեցկայան հանդիսատեսին ողջունեց նստած, իր անկրկնելի ձեռքերով: Եվ ես հաղորդումը սկսեցի հետևյալ հարցով: Ս. Ս.)

Ս. Ս. Մայա Միխայլովնա, մի անգամ ինձ ասացիք, որ համոզված եք, որ ժեստը բառից առաջ է ծնվել:

Մ. Պ. Իհարկե: Բառերը երբեմն հարկ է լինում թարգմանել, իսկ ժեստը հասկանալի է բոլորին:

Ս. Ս. Մեր երկրի երիտասարդությունն այժմ արդեն չի հասկանում, որ մենք երկար ժամանակ ապրել ենք համապարփակ ստեղծագործական անազատության վիճակում: Ինչպե՞ս է Ձեզ հաջողվել բացարձակ ազատ լինել այդ անազատության պայմաններում և լիակատար դրսևորվել:

Մ. Պ. Ռուսաստանում բոլորը միշտ ամեն ինչ հաղթահարել են: Նույնիսկ Պուշկինին են գրաքննության ենթարկել: Ու ոչ մի տեղ չեն թողել մեկնել: Նա երբեք չի եղել արտասահմանում, ոչ մի անգամ: Պուշկինը, ինչպես այսօր կասեին, երկրից մեկնելու արգելքի տակ էր: Չեմ համեմատի ինձ Պուշկինի հետ, բայց ես էլ խորհրդային տարիներին վեց տարի այդ արգելքի տակ էի: Եվ ոչ միայն ես: Դե, խորհրդային իշխանություն էր, նողկալի իշխանություն: Ով էլ այսօր փորձի պաշտպանել այն, ոչինչ չի ստացվի: Շատ սարսափելի իշխանություն էր: Եվ լավ է, որ երիտասարդները դրա մասին չգիտեն: Պետք չէ, որ տանջեն իրենց, թունավորեն իրենց հոգիներն ու ուղեղները:

Ս. Ս. Ինչպե՞ս է Ձեզ հաջողվել նման անազատության պայմաններում փոխգործակցել այնպիսի վարպետների հետ, ինչպիսիք են Մորիս Բեժարը, Ռոլան Պետին, Պիեռ Կարդենը:

Մ. Պ. Լավագույն դեպքում դա պետք է պատահեր մի 25 տարի առաջ: Ես Բեժարին՝ պարի այդ աստվածային արարչին, հանդիպեցի արդեն հասուն տարիքում: Բայց այն, ինչ ես, այնուամենայնիվ, արեցի նրա հետ, անգնահատելի է և հիանալի: Բեժարն արտառոց արտաքին ուներ, նրա մեջ ինչ-որ մեֆիստոֆելյան բան կար: Բաց գույնի, գրեթե սպիտակ աչքեր և դրանցում՝ սուր, սև բիբեր: Դրանք շամփրում

էին: Ես երևի թե միակն էի, որ չէի ընկրկում նրա հայացքից, որովհետև ինձ դա հետաքրքիր էր: Ես նրա մեջ արտասովոր անհատականություն զգացի: Եվ հետո, գիտե՞ք ինչպե՞ս էր նա ցույց տալիս: Ես միշտ չէ, որ ուշադիր եմ, կարող եմ մոռանալ, չհասկանալ: Դա ի ծնե է... Բայց Բեժարի հետ ամեն ինչ միանգամից սովորում էի: Միանգամայն անհավատալի է: Նա ինձ հետ հինգ բալետ բեմադրեց: Միակ բանը, որ դժվար էր հիշելու համար, Ռավելի «Բոլերոն» էր:

Ս. Ս. Իդա Ռուբինշտեյնը, որի համար է գրվել «Բոլերոն» և շատ այլ ստեղծագործություններ, մեծ պարուհի չէր: Ինչպե՞ս էր նա դա պարում:

Մ. Պ. Նա նշանավոր կին էր: Ինչը, պարզվեց, ավելի կարևոր էր, քան մեծ պարուհի լինելը: Նա ճաշակ ուներ և հասկանում էր իսկական արվեստը: Եվ հասկանում էր՝ ինչի վրա արժի փող ծախսել: Նա ոչ թե ադամանդներ կամ զբոսանավեր էր գնում, այլ երաժշտություն և գեղարվեստ: Եթե չլիներ նրա մոլագարությունը, ապա այդ մեծ երգահանները, որոնք երբեմն ծույլ էին և միշտ չէ, որ երազում էին նրա հետ համագործակցել, այդպես էլ չէին ստեղծի այդ գլուխգործոցները: Ռավելն էլ Իդայի պատվերը ձգձգում էր: Խոստացել էր գրել, բայց ուրիշ գործով էր զբաղված: Այդ ժամանակ Իդան նրան փող տվեց, շատ փող, երկու անգամ ավելի, քան ուզել էր, և դրեց անելանելի դրության մեջ. նա ստիպված էր գրել: Եվ գրեց «Բոլերոն»: Հետո Ռավելն ինքն էր ասում. «Ես գլուխգործոց եմ ստեղծել, որում երաժշտություն չկա»:

Ս. Ս. Բայց Սեն-Սանսի «Կարապում», անկասկած, երաժշտություն կա: Ինչո՞վ էր Ձեր կարապը տարբերվում մյուսներից:

Մ. Պ. Հայտնի չէ, թե ինչպես էր «Կարապը» բեմադրել Միխայիլ Ֆոկինը: Պահպանվել են ընդամենը մի քանի կադրեր Աննա Պավլովայի պարի պատառիկներով: Բայց դրանք ոչ մի ընդհանուր բան չունեն նրա հետ, թե ինչպես են հետո այն պարել: Ես ինքս եմ ամեն ինչ հորինել: Հիմա բոլորն են պարում, կարծես հենց այդպես էլ եղել է: Իսկ ինձ համար «Կարապը» մնացել է որպես հանպատրաստից ստեղծագործություն: Ես ամեն անգամ այն տարբեր ձևով եմ պարել: Չէ՞ որ հետաքրքիր չէ, երկու անգամ նույն ձևով պարելը:

Ս. Ս. Հետևե՛լ եք կենդանի կարապներին, երբ սկսում էիք սովորել «Կարապը»:

Մ. Պ. Այո: Գնում էի կենդանաբանական այգի, նայում՝ ինչպես է թռչունը պահում թևը, հետևում էի նրա շարժումներին: Կարապները կարող

- են երկար կանգնել արաբեսկ դիրքում, չափազանց երկար: Նայում էի ու մտածում՝ այժմ քեզ անդրդվելիություն:
- Ս. Ս.** Ինչո՞ւ էիք այդպիսի հեշտությամբ հանձն առնում պարել ռուսական դասական բալետի դպրոցի համար ոչ ավանդական բեմադրություններում արտասահմանյան պարաբեմադրիչների մոտ:
- Մ. Պ.** Ես միշտ սիրել եմ նորը, անսպասելին, անսովորը: Որովհետև բարձր որակ ցույց տալն ինձ համար ձանձրալի էր: Թեև անհրաժեշտ: Ինչպես դաշնակահարի համար ամբողջ կյանքը գամմաներ նվագելը: Եվ հետո «մոդեռն» հասկացությունն իմ ժամանակ իբրև հայիոյանք էր ընկալվում, ինչ-որ անթույլատրելի բան էր նշանակում: Իսկ իմ բնավորության մեջ կա հոսանքին հակառակ լողալը: Ես միշտ ցանկացել եմ այն, ինչ չի կարելի, ինչն արգելվում էր:
- Ս. Ս.** Հիշում եմ՝ ինչպես էիք այդ ըմբոստ ոգին նկարագրում ձեր գրքում*: Այն ժամանակ նկարահանվում էիք «Խովանշչինայի» հեռուստատեսային տարբերակում, և Ձեզ առաջարկեցին հագուստ՝ փոքր կրծկալ ու վարտիք, այնպես որ փորը մերկ էր մնում: Հագուստի լուսանկարը ցույց տվեցիք Լիլյա Յուրևնա Բրիկին, որի հետ ընկերություն էիք անում, որպեսզի քննարկեք՝ արդյոք պե՞տք չէ կրծկալն ավելի երկար անել: Իսկ Լիլյա Յուրևնան հայտարարեց, որ այն ընդհանրապես պետք է հանել:
- Մ. Պ.** Լիլյան դասական ոչինչ չէր ընդունում: Երևի դրա համար էլ նրան դուր էի գալիս, որ ամեն ինչ շաբլոնին հակառակ էի անում: Իսկ նա ազատ բարքերի տեր էր, ինչը նորաձև էր 20-րդ դարասկզբին: Ես լավ եմ հիշում, այդ անգամ նա ինձ ասաց, որ կրծկալը գրողի ծոցը պետք է ուղարկել ու պարել մերկ կրծքով: Այսօր թերևս կնկարահանեին պարուհուն նաև ամբողջովին մերկ: Բայց այն ժամանակ դա խռովարարություն կլիներ:
- Ս. Ս.** Իսկ Ձեր Կարմե՞նը: Այն ավելի մոտ է Բիզեի՞ն, Մերիմեի՞ն: Թե՞ դա Պլիսեցկայայի Կարմենն է:
- Մ. Պ.** «Կարմեն սյուիտը» բեմադրել էր կուբացի պարաբեմադրիչ Ալբերտո Ալոնսոն: Դա հենց այն նորն էր, որին ես միշտ ձգտում էի, և որը մեզանում միշտ արգելում էին: Բայց 1967 թվականն էր: Եվ «Կարմենն» արգելեցին: Առաջնախաղի հաջորդ օրը երկրորդ «Կարմենի»

* Պլիսեցկայա Մ.: Ես՝ Մայա Պլիսեցկայան: Մ., Նովոստի, 1994: